.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՍ. ԼՈՒՐԵՐ

ՓԵՏՐՎԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՒ ՕՐՕՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Կոնդակներ

Սիմոն	Սիմոնյան	ԱՄՆ Արևմտյան թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Նուբար	Մանուկյան	ԱՄՆ Արևմտյան թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Փիթըր	Ազիզ Ապաչի	ԱՄՆ Արևմտյան թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Շըրլի	Չիչեան	ԱՄՆ Արևմտյան թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Ջորջ	Գրիգճան	ԱՄՆ Արևմտյան թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Մինաս սրկ.	Ասպուրյան	Կանադայի թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Աշոտ	Գասպարյան	Կանադայի թեմ	Ս. Ներսես Շնորհալի
Համբարձում սրկ.	Աղազարյան	Կանադայի թեմ	Ս. Ներսես Շնորհալի

Օրհնության գրեր

Ջոն	Քյուրքչյան	Մեծ Բրիտանիայի թեմ	Օրհնության խոսք
Ստեփան սրկ.	Օվանեսով	Մեծ Բրիտանիայի թեմ	Օրհնության խոսք

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՀԻՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Կաթոլիկ Եկեղեցու եւ Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության համատեղ միջազգային հանձնախմբի 8-րդ հանդիպումը տեղի ունեցավ 2011 թ. հունվարի 25-28-ը, Հռոմում: Հանդիպումը հյուրընկալեց Քրիստոնեական միությունը խրախուսող պապական խորհրդի նորանշանակ նախագահ Նորին Սրբազնություն Կարդինալ Կուրտ Կոխը: Համանախագահներն էին Կարդինալ Կոխը եւ Դամիեթի Մետրոպոլիտ Նորին Սրբազնություն Բիշոյը, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի գլխավոր քարտուղար:

Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներին միացան ներկայացուցիչներ հետեւյալ Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիներից. Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Հայ Առաքելական Եկեղեցի (Ամենայն Հայոց Կաթողիկոսություն), Հայ Առաքելական Եկեղեցի (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն), Ղպտի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպիայի Թեւահեդո

Ուղղափառ Եկեղեցի եւ Մալանկարա Ասորի Ուղղափառ Եկեղեցի: Էրիթրեայի Թեւահեղձ Ուղղափառ Եկեղեցուց որեւէ ներկայացուցիչ չէր կարողացել ներկայանալ հանդիպմանը:

Երկու պատվիրակություններն ունեցան առանձին հանդիպումներ հունվարի 25-ին, նիստեր գումարեցին ամեն օր հունվարի 26-ից մինչեւ հունվարի 28-ը: Բոլոր նիստերը սկսվում էին համատեղ առավոտյան աղոթքով: Առաջին նիստի սկզբում իր խոսքում Կարդինալ Կոխը մասնակիցներին բարի գալուստ մաղթեց եւ ասաց. «Ես միշտ էկումենիկ հետաքրքրություն եմ ցուցաբերել Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների եւ ձեր պատմության, հավատքի կյանքի, ձեր պատարագի եւ աստվածաբանության նկատմամբ: Ձեր ներկայությամբ ես ինձ միշտ շատ լավ եմ զգացել: Չնայած մեր միջեւ երկարատեւ բաժանմանը, մենք հավատքի եւ եկեղեցական կարգի ընդհանուր ամուր հիմք ունենք»: Խոսքը ցավով Կարդինալը նաեւ հայտնեց Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Մեգաբե Բիլոյ Սեյֆե Սելասիի մահվան մասին: Նրան փոխարինել է Դանիել ավագ սարկավագ Սեյֆե Միքայելը, Ադիս Աբեբայի Սուրբ Երրորդություն Աստվածաբանական Համալսարանի դասախոս: Կարդինալը նաեւ շնորհավորեց Հայր Ջոն Մեթյուսին, որը վերջին հանդիպումից հետո եպիսկոպոս էր ձեռնադրվել եւ անվանակոչվել Մետրոպոլիտ Դր. Յուհաննա Մար Դեմետրիոս, Դելիի ընթերակա եպիսկոպոս, եւ Նորին Սրբազնություն Նարեկ Ալեմեզյանին, որ արքեպիսկոպոսի աստիճան էր ստացել: Բիշոյ Մետրոպոլիտը, առիթից օգտվելով, շնորհավորեց Կարդինալ Կոխին՝ պապական խորհրդի նախագահ նշանակվելու կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնեց Կարդինալ Վալտեր Կասպերին՝ մինչեւ անցյալ տարի իր հանգստի կոչվելը հանձնախումբը համանախագահելու համար: Նա նաեւ շեշտեց, որ եկեղեցիների իր ընտանիքի պաշտոնական անվանումը միշտ պետք է լինի «Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիներ»:

Այդ հանդիպմանը, շատ մտերմիկ մթնոլորտում, մասնակիցները շարունակեցին ուսումնասիրել, թե ինչպես են եկեղեցիներն արտահայտել հաղորդությունը միմյանց հետ մինչեւ 5-րդ դարի կեսերը եւ թե այդ հարցում ինչ դեր է ունեցել վանականությունը: Ներկայացված զեկույցները հետեւյալներն էին. «Մեր Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցած հաղորդությունն ու հաղորդակցությունը մինչեւ քրիստոնեական պատմության 5-րդ դարակես, ինչպես նաեւ վանականության խաղացած դերը. Անտիոքի ավանդությունը» Թեոֆիլոս արք. Ջորջ Սալիբա. «Պետրոսի դիրքը եւ այն հարցը, թե ով է հիմնադրել Հռոմի Եկեղեցին. Դպտի Ուղղափառ տեսանկյունից» Դամիեթի Մետրոպոլիտ Բիշոյ. «Հաղորդությունը եւ հաղորդակցությունը Ալեքսանդրիայի ավանդության եկեղեցիներում» Հայր Մարկ Շերիդան. «Վանականության դերը Եկեղեցիների զարգացման եւ հաղորդության հարցում» Հայր Կոլումբա Ստյուարտ. «Մեր Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցած հաղորդությունն ու հաղորդակցությունը մինչեւ քրիստոնեական պատմության 5-րդ դարակես, ինչպես նաեւ վանականության խաղացած դերը. Եթովպիայի փորձառությունը» Դանիել ավագ սարկավագ Սեյֆե Միքայել Ֆելեկե. «Տիեզերաժողովների ընդունման հարցը հայկական ավանդության մեջ» (VIII-XV դդ.) եւ «Հաղորդություն եւ հաղորդակցություն» Եզնիկ արք. Պետրոսյան. «Հաղորդությունը եւ հաղորդակցությունը Հնդկաստանի Ս. Թովմասի քրիստոնյաների եւ այլ եկեղեցիների միջեւ մինչեւ Ք.հ. 5-րդ դարակես. Հնդիկ Ուղղափառ տեսանկյունից» Մետրոպոլիտ Դր. Գաբրիել Մար Գրեգորիոս. «Հաղորդությունը եւ հաղորդակցությունը Հնդկաս-

տանի Ս. Թովմասի քրիստոնյաների եւ այլ եկեղեցիների միջեւ մինչեւ Քրիստոսի 5-րդ դարակես. Ասորի Ուղղափառ տեսանկյունից» Մետրոպոլիտ Դր. Կուրիակոս Թեոֆիլոս. «Հաղորդությունը եւ հաղորդակցությունը եկեղեցիների միջեւ. Հռոմը նախակոստանդինյան ժամանակաշրջանում» Պրոֆ. Դիեդմար Վ. Վինքլեր:

Այս տարբեր ուսումնասիրություններում հանձնախմբի անդամներն առավել ուշադրության արժանացրեցին բաժանումից առաջ եկեղեցիների միջեւ հաղորդության եւ հաղորդակցության կոնկրետ արտահայտությունները: Անշուշտ նախնական շրջանում հաղորդությունն արտահայտվել է հաղորդակցության տարբեր դրսեւորումներով: Նշվեց, որ նախակոստանդինյան ժամանակաշրջանում աշխույժ հաղորդակցություն է եղել եկեղեցիների միջեւ, հատկապես ճգնաժամի ժամանակ: Ողջախոհ պատասխանատվություն կար այլ եկեղեցիների նկատմամբ, որը պարզորոշ երեւում է նամակագրության եւ սինոդական որոշումները փոխանակելու մեջ, որով հնարավոր էր դառնում քաջալերել միմյանց, ինչպես նաեւ աստվածաբանական պարզաբանումներ մտցնել: Այս փոխանակումը փոխադարձ բնույթ էր կրում տարբեր եկեղեցիների միջեւ: Այն մատնանշում էր տեղական համայնքների միջեւ հաղորդության ուշագրավ ասպիճանը մի ընթացքում, երբ կենտրոնացված ղեկավարում չկար Հռոմեական կայսրությունում եւ դրա սահմաններից դուրս 250 տարվա ընդլայնումից հետո, որն ընդգրկում էր Հայաստանը, Պարսկաստանը, Եթովպիան եւ Հնդկաստանը: Վաղ շրջանից եկած քրիստոնեական ասկետականության ընդհանրական երեւույթը դրսեւորվեց վանական շարժումներում քրիստոնեական աշխարհի բոլոր մասերում սկսած 3-րդ դարի վերջից: Քրիստոնյա արեւելքի վանական հոգեւոր գրվածքներն օգտավետ կերպով փոխանակվել են, նույնիսկ դավանաբանական բաժանումներից հետո:

Հունվարի 25-ի երեկոյան հանձնախմբի անդամները մասնակցեցին երեկոյան ժամերգության Ս. Պողոս պատերից դուրս տաճարում, որը նախագահում էր Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Պապը՝ ամփոփելով քրիստոնեական միության համար մատուցվող աղոթքի շաբաթը: Իր քարոզում Սրբազան Քահանայապետն անդրադարձավ երկխոսության մասնակիցների ներկայությանը եւ ասաց. «Մենք ձեր հանդիպման հաջողությունը հանձնում ենք Տիրոջը, որպեսզի այն եւս մեկ քայլ լինի դեպի մեր բաղձալի միությունը»: Հինգշաբթի, հունվարի 27-ի երեկոյան Կարդինալ Կոխը ընթրիքով հյուրասիրեց երկխոսության անդամներին եւ Քրիստոնեական միություն խրախուսող պապական խորհրդի աշխատակազմին Վատիկանի Domus Sanctae Marthae-ում:

Բենեդիկտոս ԺԶ Պապը ընդունեց հանձնախմբի անդամներին ուրբաթ, հունվարի 28-ի առավոտյան: Կարդինալ Կոխը եւ Բիշոյ Մետրոպոլիտը շնորհակալություն հայտնեցին Պապին ընդունելության համար, եւ Բիշոյ Մետրոպոլիտը, հանձնախմբի անդամների անունից, Սուրբ Մարիամ Աստվածածնի՝ ղպտի սրբապատկեր նվիրեց նրան:

Այնուհետեւ Պապը ողջունեց անդամներին՝ ասելով. «Մեծ ուրախությամբ ողջունում եմ ձեզ՝ Կաթոլիկ Եկեղեցու եւ Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսության համատեղ միջազգային հանձնախմբի անդամներիդ: Ձեր միջոցով ես ուրախությամբ եղբայրական ողջույններս եմ հղում իմ եղբայրներին՝ Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների Պետերին: Ես գնահատում եմ հանձնախմբի աշխատանքները, որ սկսվել են 2003 թ. հունվարից՝ որպես միացյալ նախաձեռնություն Հին Արեւելյան Ուղղա-

փառ Եկեղեցիների ընտանիքի եկեղեցական իշխանությունների եւ Քրիստոնեական միություն խրախուսող պապական խորհրդի կողմից: Ինչպես գիտեք, երկխոսության առաջին փուլի (2003-2009 թթ.) արդյունքում հրապարակվեց «Եկեղեցու բնույթը, կազմությունը եւ առաքելությունը» վերնագրով ընդհանուր տեքստը: Այդ փաստաթուղթն ուրվագծում է այն հիմնական եկեղեցաբանական սկզբունքների ասպեկտները, որ ընդհանուր են մեզ համար եւ բացահայտում են այն հարցերը, որոնք պահանջում են առավել խորը ուսումնասիրություն երկխոսության հաջորդական փուլերի ընթացքում: Մենք միայն կարող ենք երախտապարտ լինել, որ համարյա 1500 տարվա բաժանումից հետո դեռ համաձայնության ենք գալիս Եկեղեցու խորհրդաբանական բնույթի, քահանայական ծառայության մեջ առաքելական հաջորդականության եւ աշխարհում մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ավետարանի վկայության անհրաժեշտության առնչությամբ: Երկրորդ փուլում հանձնախումբը պատմական տեսանկյունից անդրադարձել է այն կերպերին, որոնցով Եկեղեցին արտահայտել է իրենց հաղորդությունը դարերի ընթացքում: Այս շաբաթ հանդիպման ընթացքում դուք առավել խորությամբ ուսումնասիրեցիք մեր Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցող հաղորդությունն ու հաղորդակցությունը մինչեւ քրիստոնեական պատմության 5-րդ դարակես, ինչպես նաեւ վաղ շրջանի Եկեղեցու կյանքում վանականության խաղացած դերը: Մենք պետք է վստահ լինենք, որ ձեր աստվածաբանական ուսումնասիրությունները կմղեն մեր եկեղեցիներին ոչ միայն ավելի լավ հասկանալ միմյանց, այլեւ հաստատակամորեն շարունակել մեր ճամփորդությունը դեպի լիակատար հաղորդություն, որին մենք կոչված ենք Քրիստոսի կամքով: Այս նպատակով մեր ընդհանրական աղոթքն ենք վերառաքում քրիստոնեական միության համար մատուցված շաբաթվա ընթացքում, որը նոր է ավարտվել: Ձեզանից շատերը գալիս են այն տարածաշրջաններից, որտեղ քրիստոնյաներն ու քրիստոնեական համայնքները հանդիպում են փորձությունների եւ դժվարությունների, որը մեծ անհանգստության առիթ է բոլորիս համար: Բոլոր քրիստոնյաները պետք է միասին աշխատեն փոխհամաձայնությամբ եւ փոխադարձ վստահությամբ՝ ծառայելու համար խաղաղության եւ արդարության գործին: Թող բարեխոսությունը եւ օրինակը նահատակների եւ սրբերի, որոնք քաջաբար վկայել են Քրիստոսին մեր բոլոր եկեղեցիներում, պահպանի եւ զորացնի ձեզ եւ ձեր քրիստոնեական համայնքները: Եղբայրական սիրո զգացումներով հայցում եմ ձեզ համար մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհն ու խաղաղությունը»:

Միջազգային համատեղ հանձնախմբի 9-րդ հանդիպումը, Եթովպիայի Թեւահեդո Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Աբունա Պաուլոսի հրավերով, տեղի կունենա Ադիս Աբեբայում, Եթովպիա: Անդամները պետք է ժամանեն երկուշաբթի, 16 հունվարի, 2012 թ., եւ մեկնեն հունվարի 23-ին: Երկու պատվիրակությունները կունենան առանձին հանդիպումներ երեքշաբթի, հունվարի 17-ին, իսկ նիստերը կգումարվեն չորեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին՝ հունվարի 18, 19 եւ 21-ին: Հունվարի 20-ին նրանք կմասնակցեն Աստվածահայտնության արարողությանը (Timkat) եւ կիրակի օրվա պատարագներին՝ հունվարի 22-ին:

Ավարտին անդամները շնորհակալություն հայտնեցին Աստծուն՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն հանդիպման ձեռքբերումների համար:

Հռոմ, հունվար 28, 2011 թ.

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի աջակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կյոր սեղան» հիմնադրամի հետ համատեղ նախաձեռնել է «Աջակցություն ընտանիքներին» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է ամրապնդել Եկեղեցի-դպրոց-ընտանիք կապը, նպաստել հոգեւոր, ազգային, բարոյական արժեքների պահպանմանը, ապահովել դպրոցներում դասավանդվող հոգեւոր կրթության շարունակականությունն ընտանիքում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի եւ տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությամբ դպրոցներում կազմակերպել հոգեւոր հայրերի հանդիպումներ ծնողների հետ: Հանդիպումների ընթացքում հոգեւոր հայրերը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արժեհամակարգի համատեքստում կանդրադառնան ընտանեկան հիմնախնդիրներին, կլինեն քննարկումներ: Որպես օժանդակ նյութ՝ դպրոցներին եւ ծնողներին կտրամադրվի թեմատիկ գրականություն:

Ծրագրի շրջանակներում 2010 թվականի դեկտեմբերին ծխական քահանաների մասնակցությամբ իրականացվել է բովանդակային եւ մեթոդական բնույթի սեմինար-դասընթաց:

2011թ. փետրվարի 8-10-ը, Ծաղկաձորում, ՔԴԿ աշխատակազմի մասնակցությամբ տեղի ունեցավ ծրագրի փուլային կառավարման վերաբերյալ սեմինար-դասընթաց:

Ծրագրի հիմնական փուլը կմեկնարկի մարտ ամսից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԵՐՔՈՒՄ

«Հայկական ժամանակ» օրաթերթի փետրվարի 3-ի համարում լույս տեսած «Հոկտեմբերի 27-ին քեֆ է արել» հարցազրույցի առնչությամբ տեղեկացնում ենք, որ նրանում տեղ գտած տեղեկությունները հիմնազուրկ են եւ սպահող:

Հարկ ենք համարում լուսաբանել նաեւ, որ իրեն Տեր Սահակ կոչող հեղինակը կարգալուծված քահանա է: Պետք չկա քահանայի պատմուճանով զգեստավորել մեկին, որ իբրեւ կլանային սպասավոր է հանդես եկել՝ փուրք տալով եւ ծառայելով Հայ Եկեղեցու ավանդության ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իշխանության դեմ ընդվզած արդեն իսկ կարգալույծ հռչակված Ղազարոս Կյուրեղյանին (նախկինում՝ Տիրան արքեպիսկոպոս)՝ այդպիսով նաեւ գիտակցաբար խախտելով Հայ Եկեղեցու կարգ ու կանոնը:

Նման անձի կողմից Եկեղեցու հասցեին հնչող զրպարտանքները Մայր Աթոռը չի կարող այլ կերպ դիտարկել, քան քաղաքական պատվեր եւ ծառայություն ինչ-ինչ շրջանակների շահերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՐՔՈՒՄ

«Հրապարակ» օրաթերթի փետրվարի 5-ի համարում «Ֆրանսիայի հայ համայնքը դժգոհ է Էջմիածնից» հոդվածում տեղ գտած մտահոգություններն անհիմն են եւ չեն համապատասխանում իրականությանը:

Այս առնչությամբ տեղեկացնում ենք, որ 2009թ. նոյեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված թեմական-ներկայացուցչական ժողովում թեմերից ժամանած առաջնորդները եւ աշխարհական պատվիրակները հաստատեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բոլոր թեմերի համար տիպային կանոնադրություն, որտեղ հստակեցվեցին թեմական-եկեղեցական կանոնադրությունների հիմնական սկզբունքները:

Այդ թվականից ի վեր բոլոր թեմերում աշխատանք է տարվում, որպեսզի միօրինակության բերվեն թեմական եւ ծխական կանոնադրությունների հիմնական սկզբունքները: Ֆրանսիայի Հայոց թեմի պարագային եւս վերատեսության է ենթարկվելու թեմական կանոնադրությունը, որպեսզի Եկեղեցու սկզբունքներին հակասող կանոնադրական հոդվածները փոխարինվեն թեմական-ներկայացուցչական ժողովի որդեգրած՝ Եկեղեցու ավանդությանն ու կանոններին համահունչ հոդվածներով:

Հերյուրանք է նաեւ այն, թե Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ցանկանում է. «ձեռք գցել Սփյուռքի եկեղեցիների ֆինանսներին եւ ինքը տնօրինել դրանք»: Վերոհիշյալ թեմական տիպային կանոնադրության համաձայն, որը հաստատված է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, թեմական եւ ծխական կալվածքները համարվում են համայնքի սեփականություն:

Վստահ ենք, որ Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդի եւ պատկան կառույցների աշխատանքի արդյունքում կփարատվեն Ֆրանսիայի մեր հայ համայնքում տեղ գտած թյուրըմբռնումներն ու մտահոգությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց 40-օրյա մանուկ Հիսուսին տաճարին ընծայման տոնը:

Տոնի սկիզբն ազդարավեց փետրվարի 13-ի երեկոյան: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց նախատոնակի արարողություն: Արարողությանը հաջորդեց անդաստանի կարգը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը: Այնուհետեւ Մայր Տաճարի Իջման խորանից վառված մոմով Ս. Տրդատի բաց խորանի հարեւանությամբ վառվեց մեծ խարույկը՝ իբրեւ Քրիստոսին խորհրդանշող լույս: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան շարականների եւ ազգային երգերի կատարումներով, արարողությանը ներկա հավատացյալները խարույկից վառված մոմեր տարան իրենց օջախները:

Փետրվարի 14-ին Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: Հայր Սուրբն իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին: Նշելով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս օրը հռչակված է նաև նորապսակների օրհնության օր, Հայր Սուրբն անդրադարձավ նաև ընտանեկան արժեքների պահպանման անհրաժեշտությանը: «Հայոց ընտանիքը դարերի ընթացքում միշտ դարձել է հայ ժողովրդի գոյատևման և ազգային-հոգևոր արժեքների պահպանման ամուր և անխորտակելի միջնաբերդը: Հայ ընտանիքն իր արժեքային սկզբունքներով և ավանդույթներով մշտապես շարունակականություն է փոխանցել հայ ժողովրդին՝ դառնալով Երկնքի արքայության այն փոքրիկ մանրակերտը, որի մեջ այր և կին իրենց առողջ սիրո հարաբերությամբ պետք է երջանկանային և այդ մթնոլորտի մեջ ծնեին իրենց սիրո պտուղին և պիտի դաստիարակեին առողջ հոգով և առողջ մարմնով»:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, տեղի ունեցավ «Իմ գանձարանը» գունազարդման գրքույկի և «Մեր կյանքն Աստծո հետ է» ձեռնարկի հերթական հատորի շնորհանդեսը:

«Իմ գանձարանը» մանկական գիրքը հրատարակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը՝ «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Այն ներառում է սուրբգրային դրվագներ, հայոց պատմության նշանավոր դեպքերի և դեմքերի մասին պատմություններ:

«Մեր կյանքն Աստծո հետ է» գիրքն ուսումնամեթոդական ձեռնարկ է, որը կիրառվում է կիրակնօրյա վարժարաններում, որպես դասագիրք, իսկ այլ կրթական հաստատություններում՝ որպես օժանդակ գրականություն: Դասագիրքը հրատարակվել է ըստ տարիքային խմբերի՝ 6, 7-10, 10, 12, 14 տարեկան մանուկների և պատանիների համար՝ առաջին և երկրորդ մասերով, համապատասխան ուսուցչի ձեռնարկներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՄԱՄՆԱԿՑՈՒՄ Է ԳՐՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԻՆ

Փետրվարի 17-ին Երևանի Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում մեկնարկեց «Գրքի երևանյան 6-րդ տոնավաճառ»-ը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եռօրյա տոնավաճառին մաս-

նակցում է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը՝ աստվածաբանական, հայագիտական, ջատագովական, ծիսական շուրջ հիսուն նոր հրատարակություններով:

Տոնավաճառի բացման արարողությանը ներկա հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը գոհունակությամբ նշեց գրքի ցուցահանդեսի հանդեպ նկատվող մեծ հետաքրքրությունը, որ միջոցառումը իսկական տոնի է վերածել: Նաթան սրբազանը ուրախալի նկատեց նաեւ այն, որ համակարգչի դարում Հայաստանում տպագիր գրքի նկատմամբ յուրահատուկ սեր եւ վերաբերմունք կա:

Տոնավաճառին մասնակցում են Երեւանի մոտ 30 հրատարակչություններ: «Գրքի երեւանյան 6-րդ տոնավաճառը» անցկացվում է Հայկական գրատպության 500-ամյակին եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելուն ընդառաջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

Ծանոթացանք «Երկիր» օրաթերթի «Մայր Աթոռի նամակը «Երկիր» օրաթերթին» վերնագրված հրապարակմանը:

Վերջինս պատասխանն է Ս. Էջմիածնի միաբան Արսեն սարկավագ Զոհրաբյանի անդրադարձին նույն օրաթերթի «Ինչ պետք է անի Կաթողիկոսի ներկայացուցիչը հանդերում ու արտերում» հոդվածի:

Մայր Աթոռը ընդունելի չի համարում՝ Արսեն սարկավագ Զոհրաբյանի ճիշտ եւ արդար ընդվզումով շարադրված հոդվածը «Մայր Աթոռի նամակը «Երկիր» օրաթերթին» վերնագրի ներքո հրապարակելը. դատապարտելի մի նոր սխալ է դա, որ իրեն գիտակցաբար թույլ է տալիս խրագրությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փետրվարի 9-ի Հայրապետական տնօրինությամբ Տ. Արգար վարդապետ Հովակիմյանը ս.թ. մարտ 1-ից ծառայության է կոչվում Բուլղարիայի Հայոց թեմում՝ որպես առաջնորդական տեղապահ:

Տ. Արգար վարդապետ Հովակիմյանը (ավազանի անունը՝ Սամվել) ծնվել է 1972թ. Բաթում քաղաքում (Վրաստան):

1979-1989թթ. միջնակարգ կրթություն է ստացել տեղի Սպ. Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում:

1989-1995թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում՝ պաշտպա-

նելով ավարտաճառ «Հայ դավանաբանական մտքի արձագանքները Ներսես Շնորհալու «Մատթեոսի Ավետարանի մեկնության» մեջ»:

1995թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1996թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի:

2001-2004թթ. Հայրապետական տնօրինությամբ մեկնել է Ավստրիա եւ ուսանել Զալցբուրգի աստվածաբանական համալսարանում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2004թ. վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

2007թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտպանել է վարդապետական թեզ «Դիոնիսիոս Արիսպագացին հայ մատենագրության մեջ» թեմայով եւ արժանացել վարդապետության աստիճանի:

2005-2009 թթ. ծառայել է Սյունյաց թեմում որպես Սյունիքի փոխառաջնորդ:

2010թ. հովվական ծառայություն է իրականացրել Մոնրեալում (Կանադայի Հայոց թեմ):

***

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փետրվարի 16-ի Հայրապետական տնօրինությամբ կատարվել են մի քանի նշանակումներ:

Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը, ավարտելով հովվական ծառայությունը Գերմանիայի հայոց թեմում, ծառայության է կոչվել Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական կազմակերպությունում՝ որպես հոգեւոր պատասխանատու:

Տ. Խաչատուր աբեղա Կնյազյանը, ով նույնպես վերադարձել է Գերմանիայի հայոց թեմից, հոգեւոր սպասավորությունը կշարունակի Սուրբ Հռիփսիմե վանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՀԽ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԺՈՂՈՎԸ

Փետրվարի 16-22-ը, Ժնեւում (Շվեյցարիա), գումարվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի հերթական ժողովը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեցին Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը եւ տիկ. Փոլա Դեւեջյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ներկայացնում էին Տ. Նարեկ արքեպիսկոպոս Ալամեզյանը եւ դոկտ. Նորա Պայրազտարյան-Գապագյանը: Ժողովին որպես քարտուղար մասնակցեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանատան աշխատակից Տ. Սիփան աբեղա Գեւորգյանը:

Ժողովում քննարկվեցին Յամայկայում կայանալիք Միջազգային էկումենիկ խաղաղարար համաժողովի նախապատրաստման աշխատանքներին, Մերձավոր Արեւելքում

քրիստոնյաների վիճակին եւ ԵՀԽ-ի միջազգային կառույցներում առաջարկվող փոփոխություններին առնչվող հարցեր:

Կենտրոնական կոմիտեն անդրադարձավ նաեւ Միջին Արեւելքում ծավալվող իրադարձություններին: ԵՀԽ գլխավոր քարտուղար Օլավ Տվեյտը իր խոսքում ընդգծեց Յամայկայի համաժողովի կարեւորությունը, որը պետք է ամրապնդի եկեղեցիների միացյալ ջանքերը հանուն բռնության հաղթահարման: Նա նաեւ նշեց, որ եկեղեցիները կարեւոր դերակատարություն պետք է ունենան Միջին Արեւելքում խաղաղության ու արդարության ամրապնդման հարցում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԻՐԱՔԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՆԵՎՈՒՄ

Փետրվարի 18-ին, Ժնեւում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական կոմիտեի ժողովի շրջանակներում տեղի ունեցավ Իրաքի կրոնական առաջնորդների հանդիպումը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս հանդիպմանը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էր Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը, որ նաեւ Իրաքի քրիստոնեական Եկեղեցիների առաջնորդների խորհրդի գլխավոր քարտուղարն է:

Հանդիպման մասնակիցներն անդրադարձ ունեցան վերջերս Իրաքում քրիստոնյաների դեմ կիրառված հալածանքներին եւ ահաբեկչական գործողություններին: Կենտրոնական կոմիտեի ընդլայնված նիստի ժամանակ նրանք ընդգծեցին Իրաքի բոլոր բնակիչների համար անվտանգության ապահով միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը: Իրաքի կրոնական առաջնորդները շեշտեցին, որ Եկեղեցին Իրաքում շարունակում է մնալ ճնշման տակ, եւ եթե այսպես շարունակվի՝ քրիստոնյաները կկանգնեն խիստ վտանգի առաջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Փետրվարի 14-21-ը Ս. Գեղարդավանքի երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Մհեր Նավոյան, խմբավար՝ Անահիտ Պապայան)՝ գլխավորությամբ Ս. Գեղարդավանքի վանահայր Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանի համերգներով հանդես եկավ Գերմանիայի Հայդենհայմ, Շտուտգարտ, Գյոպինգեն եւ Հանաու քաղաքներում:

Սա երգչախմբի հինգերորդ այցն էր Գերմանիա՝ Գեղարդավանքի եւ Գերմանիայի Լոր2 վանք-գիտահետազոտական ինստիտուտի համագործակցու- թյան շրջանակներում: Երգչախումբը գերմանացի ունկնդրին ներկայացրեց հայ հոգեւոր եւ ժողովրդական երգերի մշակումներ:

Առաջին համերգը կայացավ Հայդենհայմ քաղաքի Ս. Միքայել եկեղեցու լեփ-լեցուն

սրահում: Երգչախմբի գերմանացի բարեկամ, երաժիշտ Քրիստիան Վայդայի կողմից կատարվեց նաեւ համերգի պրոֆեսիոնալ ձայնագրություն: Համերգը կազմակերպել էր “Neuer Kammerchor” երիտասարդական երգչախումբը՝ Թոմաս Քամմելի ղեկավարությամբ: Այս երգչախմբի հետ «Շիլլեր գիմնազիումի» փոքրասրահում տեղի ունեցավ հանդիպում-փորձ, որի ընթացքում Ա. Պապայանի խմբավարությամբ գերմանական երգչախմբի երիտասարդ անդամները սովորեցին Կոմիտասի՝ «Ելա տանիս» ժողովրդական երգի մշակումը: Այնուհետ “Neuer Kammerchor”-ի անդամները կատարեցին Ռ. Ամիրխանյանի «Երազի իմ երկիր» ստեղծագործությունը, որը սովորել էին դեռ անցյալ տարի Հայաստան կատարած համերգային ուղեւորության առիթով:

Հատկապես նշանակալի էր տարբեր երկրներից ժամանած երգչախմբերի համատեղ համերգը Շտուտգարտում, որի ընթացքում հայկական երգչախմբին տրված էր առավելագույն տեւողությամբ ելույթի հնարավորություն: Ուշագրավ էր միացյալ երգչախմբի՝ Յ. Ս. Բախի “Singet dem Herrn” ստեղծագործության մի հատվածի կատարումը՝ նշանավոր դիրիժոր Հելմուտ Ռիլլինգի ղեկավարությամբ: Վերջինս բարձր գնահատեց հայաստանյան խմբի կատարումները:

Գյոպինգեն եւ Հանաու քաղաքներում երգչախմբին ջերմորեն հյուրընկալեցին տեղի հայ համայնքները՝ Տ. Սերովբե վարդապետ Իսահանյանի եւ Տ. Տիրատուր քահանա Սարդարյանի գլխավորությամբ: Փետրվարի 19-ին Գյոպինգենում, իսկ փետրվարի 20-ին Հանաուում մատուցվեց Ս. Պատարագ՝ Գեղարդավանքի երգչախմբի մասնակցությամբ: Պատարագիչն էր Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հոգեւոր սպասավորներս, քննության առնելով հայ ընտանիքի առջեւ ծառացած մարտահրավերները, կարեւորությամբ ընդգծում ենք հայրենի պետության եւ հասարակության կյանքում ընտանիքի բացառիկ արժեքը եւ ազգապահպան առաքելությունը: Դարեր շարունակ ապրվածադիր ամուսնական միության սրբազան պատվիրանը հիմն է եղել հայ ավանդական ընտանիքի՝ իբրեւ փոքր եկեղեցու, որին հատուկ է եղել աստվածսիրությունն ու հայրենասիրությունը, ընտանեկան սրբությունն ու հավատարմությունը ազգային, բարոյական ու հոգեւոր արժեքներին: Այս ամենը օրհնվել ու նվիրագործվել է Ս. Պսակի մեծ խորհրդով եւ այն գիտակցությամբ, թե՝ «Եվ երկուսը մեկ մարմին պիտի լինեն, ...որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 6):

Մեր հովվական ծառայության ընթացքում, սակայն, ականատեսն ենք հասարակական գիտակցության ու վարքի մեջ դրսեւորվող մտահոգիչ երեւույթների, որոնք նաեւ հետեւանքն են մեզանում հոգեւոր կյանքի ու ավանդական բարոյական արժեքների տկարացման, համաշխարհայնացման ու աշխարհիկացման գործընթացների, սոցիալական ու տնտեսա-

Քահանայից հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Տեառնընդառաջի նախատոնակ

կան դժվարությունների: Այսօր հայ ընտանիքի առջեւ ծառացած են բարոյական այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են ամուսնության եւ պսակի խորհրդի ընկալման աղճատումը, կողակցի ու ընտանիքի նկատմամբ, զավակների ազգային-հոգեւոր դաստիարակության հանդեպ պատասխանատվության անկումը: Նմանօրինակ մտայնության եւ վիճակների անցանկալի հետեւանք են ամուսնական անհավատարմությունը, ընտանեկան բռնությունը, հղիության արհեստական ընդհատումը եւ այլ մերժելի երեւույթներ: Հայ ընտանիքում ընտանեկան բնական կյանքի խաթարման եւ հաճախ ամուսնալուծության պատճառ է դառնում դրանից բխող դառն հետեւանքներով նաեւ տարբեր կրոնական կազմակերպությունների եւ շարժումների քայքայիչ գործունեությունը:

Այս ամենով մտահոգված՝ ընդգծում ենք անհրաժեշտությունը մեր հովվական ծառայության մեջ առավել գործուն ջանքեր ներդնելու՝ ի զորացումն Եկեղեցու եւ ընտանիքի դարավոր կապի՝ հանապազորյա խնամքով, եկեղեցա-ծիսական արարողություններով, նախաամուսնական եւ հետամուսնական շրջանում զույգերի հետ իրականացվող հետեւողական հոգեւոր-խորհրդատվական ծառայություններով:

Ամուսնացող զույգերին հորդորում ենք ամուսնության նկատմամբ առավել պատասխանատու մոտեցում ցուցաբերել՝ օրինակ ունենալով մեր աստվածապաշտ հայրերին, եւ Ս. Պսակի խորհուրդն ընդունել որպես անշահախնդիր սիրո, միմյանց սատարումի եւ հոգատարության անքակտելի սուրբ միություն:

Այս նկատառումով մեծապես կարեւորում ենք մեր ողջ հանրության՝ անհատների, պետական եւ հասարակական կառույցների, զանգվածային լրատվության միջոցների համագործակցությունը հայ ընտանիքի ավանդական արժեհամակարգի ամրապնդման եւ ընտանիքի սրբության դեմ կատարվող ոտնձգությունների կանխարգելման գործում:

Աղոթում ենք Երկնավոր մեր Տիրոջը Հայրենի մեր երկրի խաղաղ, ապահով ու առաջընթաց կյանքի համար, որպեսզի ապավինությամբ առ հարուցյալն Աստված, ազգային եւ հոգեւոր միաբանությամբ շարունակենք ջանքեր ներդնել հայ ընտանիքի առջեւ ծառացած խնդիրների լուծմանն ի նպաստ:

Հավատում ենք, որ կհաղթահարվեն հասարակական մեր կյանքը հուզող բոլոր տեսակի դժվարությունները, եթե մեզանում գերիշխեն հավատն առ Աստված, սերը եւ վստահությունը միմյանց, Հայրենիքի եւ Մայր Եկեղեցու հանդեպ, հավատարմությունը մեր ազգային արժեքներին ու նախնյաց ավանդներին:

Ժողովի ավարտին ներկա հոգեւորականներին հայրապետական իր պատգամը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Միքայել Սրբազանին եւ մնացյալ թեմական առաջնորդներին՝ քահանայից հավաքի կազմակերպմանը բերած աջակցության համար, ապա շնորհավորեց հոգեւորականաց դասին ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով՝ մաղթելով կոչման բարձր գիտակցությամբ շարունակել հոգեւոր առաքելությունը՝ ի նպաստ բարեպաշտ ժողովրդի հոգեւոր կարիքների բավարարման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդգծեց ժողովի քննարկման նյութ դարձած հայ ընտանիք-Եկեղեցի կապի ամրապնդման այժմեականությունը՝ նշելով, որ հովիվները պետք է մանուկ հասակից զբաղվեն երիտասարդների հոգեւոր դաստիարակությամբ, ամենօրյա

հովվական հեգեւողական աշխատանքով ու հոգատարությամբ զերծ պահեն երիտասարդ ընտանիքներին տարբեր տեսակի դժվարություններից ու փորձություններից: Անդրադառնալով եկեղեցականների դերակատարությանը եւ նրանց առաքելությանը՝ Նորին Սրբությունը նշեց. «Մեր խնդիրը խաղաղություն, սեր եւ հաշտություն քարոզելն ու հաստատելն է ընտանեկան եւ ընկերային կյանքում...: Մենք՝ որպես եկեղեցականներ, առավել չափով պարտականություններ ունենք մեր ժողովրդի առջեւ՝ նրանց հոգեւոր-բարոյական կյանքը կազմակերպելու, քրիստոնեական կրթությամբ եւ դաստիարակությամբ ապահովելու, որպեսզի ճշմարիտ քրիստոնեական ոգին կրող հայորդիներ ունենանք, խորը հավատացյալ, աստվածասեր, մարդասեր, եկեղեցասեր մարդիկ, եւ այդ պարտականությունը մեր առաքելությունն է»:

Նորին Սրբությունը, անդրադառնալով եկեղեցականության ծառայությանը, արձանագրեց, որ դեռ ահռելի աշխատանք կա ծառացած Եկեղեցու առջեւ: «Այդ ահռելի աշխատանքը մեզ ոչ թե հուսալքության եւ թեւաթափության պետք է առաջնորդի, այլ ընդհակառակը՝ մեր մեջ պիտի բորբոքի նախանձախնդրությունը, որպեսզի ավելի ճիգ ու ջանք գործադրենք, եռանդ ներդնենք մեր ծառայության մեջ», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով հոգեւորականներին հնարավորն ի գործ դնել առավել չափով լուսավոր դարձնելու հայի կյանքը, օգտակարություն ունենալու մեր ժողովրդի զավակներին, նրանց մեջ կրթել լավատեսության, աստվածսիրության, հայրենասիրության ոգին:

Ժողովի ամփոփումից հետո Մայր Տաճարում հոգեւոր դասը մասնակցեց երեկոյան ժամերգության եւ ս. Ղեւոնդյանց քահանաների տոնի նախատոնակին:

Մարտի 1-ին, Ս. Ղեւոնդյանց տոնին, Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Արմավիրի թեմից Փարաքարի Ս. Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Գեղամ քահանա Քեսաբլյանը, ով իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին ու նշանակությանը մեր ազգային կյանքում:

Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պարգեւաբաշխություն: Տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ավագ քահանայության պատիվ շնորհեց Արարատյան Հայրապետական թեմից Տ. Մկրտիչ քհն. Թովմասյանին եւ Տ. Գորյուն քհն. Մարտիրոսյանին, Արմավիրի թեմից Տ. Գեղամ քհն. Քեսաբլյանին:

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք ստացան Արցախի թեմից Տ. Մինաս քհն. Մովսիսյանը, Տ. Էմանուել քհն. Վարդանյանը, Սեւանի վանքից՝ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը, Հարավային Ռուսաստանի թեմից Տ. Սարգիս քհն. Պողոսյանը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցուց՝ Տ. Ղեւոնդ քհն. Մայիլյանը:

Լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ծառայող Տ. Սիփան քհն. Գրիգորյանը, Տ. Սեդրակ քհն. Ազնավուրյան եւ Տ. Հովհաննես քհն. Քեսաբլյանը, Արարատյան Հայրապետական թեմից Տ. Եզնիկ քհն. Մալխասյանը եւ Տ. Եփրեմ քհն. Հարությունյանը, Շիրակի թեմից Տ. Ստեփանոս քհն. Ավետիսյանը եւ Տ. Հովհաննես քհն. Ալեքսանդրյանը, Տ. Վարագ քհն. Հակոբյանը, Վայոց ձորի թեմից Տ. Գալուստ քհն. Սահակյանը, Արագածոտնի թեմից Տ. Վիգեն քհն. Մանուկյանը, Կոտայքի թեմից Տ. Վրթանես քհն. Բաղումյանը, Տ. Արիստակես քհն. Բաղալյանը եւ Տ. Ժիրայր քհն. Խաչատրյանը, Գեղարքունյաց թեմից Տ. Նշան քհն. Սարգսյանը, Տ. Մեսրոպ քհն. Երիցյանը եւ Տ. Ներսես քհն.

Սահակյանը, Տավուշի թեմից Տ. Արամ քհն. Միրզոյանը, Բանակի հոգևոր հովվությունից Տ. Արսեն քհն. Սարոյանը, Վիրահայոց թեմից Տ. Տաթև քհն. Մարուքյանը, Տ. Մովսես քհն. Մանուկյանը, Տ. Արարատ քհն. Գումբալյանը եւ Տ. Տիգրան քհն. Մխիթարյանը, Վայոց ձորի թեմից Տ. Սեպուհ քհն. Հարությունյանը:

ԵԿԵՂԵՑԻ-ԲԱՆԱԿ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Փետրվարի 25-ին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Եկեղեցի-բանակ կապերի ամրապնդմանը նվիրված խորհրդակցություն: Նիստին մասնակցում էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԱԺ պատգամավորներ Ժաննա Գալստյանն ու Անդրանիկ Սարգսյանը, ԼՂՀ ՊԲ հոգեւոր սպասավորները:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Գերաշնորհ Պարգեւ Սրբազանը ժողովականներին ներկայացրեց նիստին քննարկվելիք հիմնական հարցերը, որոնց առանցքում բանակ ներթափանցած ախտերն ու դրանց լուծմանն ուղղված հոգեւորականների ջանքերն էին:

Խորհրդակցության մասնակիցներն առանձնացրեցին մեր հասարակության մեջ տեղ գտած եւ բանակ ներթափանցած մի շարք ախտեր ու սպառնալիքներ. քրեական կոդեքսներից բխող կեղծ արժեքներ, աղանդների եւ օտարերկրյա աղբյուրներից սնվող ՀԿ-ների քայքայիչ ազդեցություն, օտարամուտ ենթամշակույթներ (էմոներ, գոթեր եւ այլն), դաժանություն, նյութապաշտություն, կրթական անբավար վիճակ եւ այլն: Նշյալ երեւույթների սերմանման գործում իր տխուր ներդրումն ունի նաեւ հեռուստաեթերը: Փաստվեց, որ այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլերում անժխտելի դերակատարություն եւ հսկայական անելիք ունեն հոգեւորականները:

ԱԺ պատգամավոր Ժաննա Գալստյանը, անդրադառնալով վերոնշյալ հարցերին, ընդգծեց բանակում հոգեւորականների դերի ու վարկանիշի առավել բարձրացման անհրաժեշտությունը: Տիկին Գալստյանն արձանագրեց, որ հայ իրականության մեջ կայացած երկու կառույց կա՝ Եկեղեցի եւ Բանակ, որոնք ունեն ընդհանուր շատ նմանություններ, եւ հենց այս երկու կառույցների դեմ էլ մեծ արշավ է տարվում, հետեւաբար առավել քան անհրաժեշտ է այս երկու կառույցների սերտ համագործակցությունը: Նա նշեց, որ մենք կարող ենք անգամ ունենալ բնակավայրեր, որ հոգեւորական չունենա, սակայն մեր զորամասերում պարտադիր է հոգեւորականների ներկայությունը:

ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը նշեց, որ բանակ-հասարակություն կապերի ամրապնդումը եւ բանակում առկա խնդիրների վերացումն ու բանակի առավել զորացումը առանցքային խնդիր են Արցախի իշխանությունների համար՝ գլխավորությամբ նախագահ Բակո Սահակյանի: Հսկայական համարելով այդ հարցում Եկեղեցու դերակատարությունը՝

ԱԺ խոսնակը հավաստիացրեց, որ Արցախի իշխանությունները սիրով պատրաստակամ են ցուցաբերելու իրենց օժանդակությունը ցանկացած հարցում:

Բանակի հոգեւոր առաջնորդ Վրթանես Սրբազանը տեղեկացրեց, որ Հայոց բանակում հոգեւոր սպասավորների ինստիտուտն արդեն գործում է 15 տարի՝ տնօրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, եւ ներկայումս ազգային բանակում հոգեւոր սպասավորություն են իրականացնում 46 հոգեւորականներ: Արվում է ամեն ինչ՝ բանակում հոգեւորականների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու համար: Սրբազանը տեղեկացրեց, որ պատրաստվում են նոր հոգեւոր ձեռնարկներ, որտեղ զինվորյալ հայորդիները կգտնեն իրենց հոգեւոր բնույթի հարցերի պատասխանները: Պատրաստվում է նաեւ սուրբգրային համապատասխան հատվածներով զինվորական Աստվածաշունչ, ինչը նպատակաուղղված կլինի զինվորի հայրենասիրական եւ մարտական ոգու բարձրացմանը՝ հիմնված քրիստոնեական հավատքի վրա: Նախատեսվում են հոգեւոր սպասավորների համար ռազմական հոգեբանության եւ մարտական պատրաստության հատուկ դասընթացներ: Բանակի հոգեւոր առաջնորդը, զոհունակությամբ արձանագրելով, որ հոգեւոր սպասավորներն իրենք են խնդրում երկարացնել բանակում իրենց ծառայության ժամկետը, ընդգծեց, որ ռազմակրթական հաստատություններում եւ զորամասերում հոգեւորականները ստանալու են մշտական ծառայության կարգավիճակ:

Այնուհետեւ Վրթանես Սրբազանն անդրադարձավ մի շարք խնդիրների՝ մասնավորապես առանձնացնելով բանակում հոգեւոր սպասավորների իրավական կարգավիճակի խնդիրը: Հոգեւոր առաջնորդն ընդգծեց, որ բանակում հոգեւորականների աշխատանքի արդյունավետության կարեւորագույն գրավականներից է օրենսդրորեն տրված իրավական կարգավիճակը: Առաջնահերթ նկատեց նաեւ հոգեւորականների աշխատանքային ծրագրի ներառումը մարտական պատրաստության ոլորտում:

Արցախի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչները խոստացան ամեն կերպ աջակցել բանակի հոգեւոր հովվության իրագործումներին: Արցախի ԱԺ նախագահն ու պատգամավորները պատրաստակամություն հայտնեցին նշյալ խնդիրները բարձրաձայնել համապատասխան հարթակներում եւ հասնել դրանց լուծմանը: Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Սրբազանը սիրով հոժարություն հայտնեց թեմի կողմից հնարավոր ամեն աջակցություն՝ առաջարկելով օրինակ բանակի հոգեւոր սպասավորների համար նախատեսված դասընթացներն անցկացնել Գանձասարում:

Նիստի մասնակիցների կողմից ուղենշվեցին նաեւ մի շարք անելիքներ. խորացնել ազգային-եկեղեցական արժեքների քարոզչությունը՝ թե՛ բանակում եւ թե՛ առհասարակ հասարակության լայն շրջանակներում, հատուկ ուշադրություն դարձնել մատաղ սերնդի դաստիարակությանը, ուժեղացնել տեղեկատվական դաշտը, պատրաստել համապատասխան գրականություն, լայնորեն ներգրավել մտավորականներին ու մշակութային գործիչներին վերոնշյալ աշխատանքներում եւ այլն:

Ժողովը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՖՐԱՆՍԱՅԻ ԹԵՄԸ ԿԸ ՆԵՐՔԷ

«Հրապարակ» օրաթերթի Փետրուար 5-ի թիւին մէջ զարմանքով կարդացինք «Ֆրանսայի հայ համայնքը դժգոհ է Էջմիածնից» գրությունը, որ լեցուն էր իրականութեան հետ կապ չունեցող եւ երեւակայութեան արդիւնք եղող հաստատումներով: Այդ գրութեան մէջ տեղ գտած անհիմն ամբաստանութիւնները բացարձակապէս կը հերքենք, հանրութեան ուշադրութիւնը հրաւիրելով հետեւեալ կէտերուն վրայ.

1. Հայ Առաքելական Եկեղեցւոյ բոլոր թեմերէն ներս հիմնական կանոնները միօրինակ ձեւով ամրագրելու համար երկար ժամանակ թեմերու ղեկավար մարմիններու կողմէ մշակուեցաւ հիմնական կանոնադրութիւն մը, որ վաւերացուեցաւ Ս. Էջմիածնի մէջ 2009-ի Նոյեմբերին գումարուած թեմական ներկայացուցչական ժողովին, թեմերէն ժամանած առաջնորդներու եւ աշխարհական պատգամաւորներու կողմէ, որոնց մէջ էր նաեւ Ֆրանսայի պատուիրակութիւնը: Այս ընդհանուր սկզբունքներուն վրայ պիտի հիմնուին թեմական եւ ծխական տեղական կանոնադրութիւնները, որոնք չեն կրնար հակասել Հայ Եկեղեցւոյ կանոններուն: Այս ընդհանուր սկզբունքներու մշակման եւ ապա վաւերացման գործընթացին մէջ հիմնական աշխատանքները տարին թեմերու աշխարհական ներկայացուցիչները: Հետեւաբար, զրպարտութիւն է վերոյիշեալ գրութեան մէջ լոյս տեսած այն անհիմն ամբաստանութիւնը, որ Ս. Էջմիածինը ճիգ կը թափէ Մայր Աթոռէն ղեկավարելու թեմերը:

2. Ցերիւրանք է նաեւ այն անհիմն ամբաստանութիւնը, որ «Էջմիածինն ուզում է ձեռք գցել Սփիւռքի եկեղեցիների ֆինանսներին ու ինքը տնօրինել դրանք»: Վերոյիշեալ թեմական տիպային կանոնադրութեան համաձայն, որ հաստատուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ, թեմական եւ ծխական կալուածները կը նկատուին համայնքի սեփականութիւն: Մենք նոյնիսկ Ս. Էջմիածնին չենք վճարած մեր թեմի տարեկան աթոռատուրքը, «Լուսաւորչի Լուման», հակառակ անոր՝ որ մեր թեմը լայնօրէն կ'օգտուի Մայր Աթոռի մարդուժէն: Վեհափառ Հայրապետը մեր իւրաքանչիւր խնդրանքին անմիջապէս գոհացում կու տայ, մեզի ուղարկելով կուսակրօն եւ ամուսնացեալ հոգեւորականներ, որոնց պատրաստութիւնը այնքան տարիներու բարոյական եւ նիւթական հսկայ զոհողութիւններու արդիւնք է: Իսկ մենք նոյնիսկ չենք մասնակցիր մեր հոգեւորականներու պատրաստութեան ծախսերուն:

3. Վերոյիշեալ գրութեան մէջ տեղ գտած են իրականութեան հետ կապ չունեցող եզրաբանութիւններ, ինչպէս՝ «Հայ առաքելական եկեղեցիների հոգաբարձուների խորհուրդ», որուն մասին կ'ակնարկուի որպէս «ղեկավար մարմին», եւ որ հանդէս կու գայ ֆրանսահայերու անունով: Ֆրանսայի թեմէն ներս գոյութիւն չունի «Հայ առաքելական եկեղեցիների հոգաբարձուների խորհուրդ», ո՛չ որպէս կառոյց, եւ ո՛չ որպէս հակասութիւն: Հայ Եկեղեցւոյ «ղեկավար մարմին»ներ են ծխական խորհուրդները, որոնք կ'ընտրուին ծխական անդամական ժողովին կողմէ, թեմական խորհուրդը, որ կ'ընտրուի բոլոր ծուխերէն ընտրուած թեմական պատգամաւորական ժողովին կողմէ: Ասոնցմէ դուրս որեւէ կառոյց կամ ղեկավար մարմին գոյութիւն չունի Ֆրանսայի թեմէն ներս:

4. Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ վերոյիշեալ գրութեան բնագիրը ի՞նչ տիպղոսաթերթի վրայ գրուած էր եւ ի՞նչ կնիք կը կրէր, անշուշտ եթէ որեւէ տիպղոսաթերթ

կամ կնիք գործածուած է: Որովհետեւ զարմանալին այն է, որ որեւէ լրատուական միջոց պէտք է գիտնայ լրագրական կանոնները՝ սրուգելու համար գրութեան մը հեղինակները եւ աղբիւրները: Ի վերջոյ, կաթիլ մը աւելի հետաքրքրութիւն կորզելու գինը արժանահաւատութիւնը զոհելը չէ:

ԴԻՎԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՓԱՐԻԶ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԸ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Փետրվարի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ս. Սարգսի տոնի նախօրեին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպումից հետո Արմավիրի թեմի երիտասարդները շտապեցին Արմավիր քաղաք որտեղ պէտք է մասնակցեին Արմավիր քաղաքի «Սուրբ Սարգիս» երիտասարդաց միության կազմակերպած Խաչի թափորին:

Արմավիր քաղաքի առաջնորդարանի հարեւանությամբ գտնվող Ս. Սարգիս եկեղեցին փետրվարի 18-ի երեկոյան բազմամարդ էր: Թե քաղաքի երիտասարդները եւ թե տարեցները եկել էին հավատքով եւ սիրով մասնակցելու երեկոյան թեմի հոգեւորականների կողմից մատուցվող ժամերգությանը, որից հետո խաչի թափորին:

Սուրբ Սարգսի տոնի խորհուրդը առավել ընդգծված դարձնելու համար Խաչի թափորն առաջնորդում էր նժույգով ձիավորը իր ասպետական կերպարով: Թեմի հոգեւորականների գլխավորությամբ, միասնական աղոթքով Սուրբ Սարգիս եկեղեցուց թափորը շարժվեց քաղաքի Հանրապետության փողոցով դեպի կենտրոնական հրապարակ, ճանապարհին երիտասարդների կողմից բոլոր սիրահարներին եւ անցորդներին բաժանվեցին օրհնված աղաբլիթներ, եւ Սուրբ Սարգսի տոնի խորհուրդով թերթոն-հրավիրատոմսեր՝ Արարատյան Հայրապետական թեմի կողմից տրամադրված: Միջոցառմանը սիրով իրենց աջակցությունն էր բերել Արմավիրի քաղաքապետարանը՝ կենտրոնական հրապարակում կազմակերպելով համերգային ծրագիր, իսկ Հայոց Արծիվներ մարզային գրասենյակը պատվիրել էր հազար աղաբլիթ:

Ս. Սարգսի տոնը Հայաստանում տարիներ շարունակ նշվում է նաեւ ժողովրդական ավանդապատումներին համաձայն, տոնի կարեւորագույն խորհուրդին՝ աղաբլիթ ուտելուն շարունակում են հետեւել ջամուսնացած երիտասարդները: Տոնի ողջ խորհուրդին հավատարիմ երիտասարդներին թեմի հոգեւորականները շնորհավորեցին քաղաքի հրապարակից եւ մաղթեցին որ երիտասարդների բարեխոս Ս. Սարգիսը հովանավոր լինի ամենքին, հորդորելով ավելի եւս հավատալ իրենց սեփական աղոթքների զորությանը եւ միշտ հավատքով կատարել յուրաքանչյուր գործ:

Իսկ փետրվարի 19-ին Արմավիրի առաջնորդարանի հարեւանությամբ գտնվող Սուրբ Սարգիս եկեղեցին լի էր երիտասարդներով, որոնք նախատոնակի հաջորդ օրը մասնակից եղան Սուրբ Պատարագին, որը մատուցեց թեմի քահանա Տ. Ստեփանոս Մելիքյանը, իսկ Պատարագից հետո թեմի քահանա Տ. Սարգիս Խլղաթյանի կողմից կատարվեց երիտասարդների օրհնության կարգ:

ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ս. ՍԱՐԳԻ ՏՈՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Այս տարի Արցախում Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի եւ ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության համատեղ նախաձեռնությամբ անանախադեպ շուքով նշվեց Ս. Սարգսի տոնը, որը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հռչակված է Երիտասարդների օրհնության օր:

Տոնի օրը՝ փետրվարի 19-ին, Շուշիի շրջանի Եղծահող գյուղի Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Մեսրոպ քահանա Մկրտչյանի, մատուցվեց Ս. Պատարագ: Հավարտ Ս. Պատարագի կատարվեց երիտասարդների օրհնության կարգ: Երիտասարդության օրհնության կարգ կատարվեց նաեւ Արցախի թեմի մյուս եկեղեցիներում:

Նույն օրը Արցախում գործող երիտասարդական կառույցների պատասխանատուներին ընդունեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը:

Արցախի նախագահը կարեւորեց երիտասարդական կառույցների դերը հանրապետության կյանքում եւ ընդգծեց նրանց գործունեության ակտիվացման եւ ընդլայնման անհրաժեշտությունը: Այնուհետեւ երիտասարդներին իր շնորհավորանքի եւ օրհնության խոսքն ուղղեց Պարգեւ Սրբազանը:

Ապա նախագահն ու թեմական առաջնորդը երիտասարդներին հանձնեցին 2007թ. մայիսին Գանձասարում հռչակված ուխտագրի մագաղաթյա տեքստը: Ուխտագրում մասնավորապես ասված է. «....Կարեւորելով պատմական պահը, կառուցելով պետություն, ունենալով հզոր բանակ եւ պետականություն, առաջնորդվելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ սկզբունքներով, մենք՝ այսօրվա երիտասարդությունս, գտնում ենք, որ մեր փրկությունը եւ հետագա բարգավաճումը մեր միասնականությունն է, որը պետք է հիմնված լինի ազգային արժեքների պահպանման սկզբունքների վրա: Մենք՝ 21-րդ դարի Արցախի բոլոր երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներս, հավաքվելով այս պատմանվիրական վայրում, ուխտ արեցինք հանուն մեր ազգի հաստատուն ապագայի ու Հայրենիքի անսասանության: Ապագա սերունդներին պատգամում ենք լինել արժանի զավակներ մեր ազգի»: Ուխտագրի ներքո, բացի Արցախի երիտասարդական կառույցների պատասխանատուներից, իրենց ստորագրությունն են դրել նաեւ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը եւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

Ս. Սարգսի տոնին նվիրված միջոցառումները շարունակվեցին նույն օրվա երեկոյան՝ Արցախի թեմի Երիտասարդաց միության եւ ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության համատեղ կազմակերպած համերգային ու ժամանցային ծրագրով, որը տեղի ունեցավ Ստեփանակերտի Սիրահարների ծառուղում:

Համերգին ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ՀՀ

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ այլ պաշտոնատար անձինք, ինչպես նաեւ ՊԲ զինվորներ ու բազմաթիվ երիտասարդ հայորդիներ:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ԱՐՑԱԽԻ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 19-ին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդարանում, նախագահությամբ թեմական առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, տեղի ունեցավ թեմական խորհրդի նիստ: Նիստին իրենց մասնակցությունն էին բերել թեմական խորհրդի կազմում ընդգրկված ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ՀՀ եւ ԼՂՀ Պաշտպանության նախարարներ Սեյրան Օհանյանն ու Մովսես Հակոբյանը, ինչպես նաեւ հոգեւորականներ, պետական պաշտոնյաներ, գործարարներ:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Գերաշնորհ Պարգեւ Սրբազանը ժողովականներին ներկայացրեց նիստին քննարկվելիք հիմնական հարցերը:

Նախ ամփոփվեցին Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 770-ամյակի տոնակատարությունների ծիրում կայացած միջոցառումների արդյունքները:

Ապա քննության առնվեցին ինչպես Ս. Ջատկին ու Ցեղասպանության զոհերի հիշատակության օրը, այնպես էլ Արցախի Հանրապետության 20-ամյակի հոբելյանին Եկեղեցու եւ պետության համատեղ միջոցառումների ծրագրերը:

Լայն ուշադրության արժանացան Եկեղեցի-հասարակություն փոխհարաբերությունները, որոնց շարունակական ամրապնդումը Արցախի նախագահ Բակո Սահակյանը կարեւորեց իբրեւ հասարակության ներդաշնակ զարգացման հիմքերից մեկը: Հատուկ ուշադրություն դարձվեց Բանակ եւ Եկեղեցի կապերի ամրապնդման խնդրին:

Այնուհետեւ ժողովականներին ներկայացվեցին թեմի եկեղեցաշինական, քարոզչական ու հրատարակչական աշխատանքները եւ այլ հարցեր:

Ժողովը փակվեց Պարգեւ Սրբազանի «Դահպանիչ» աղոթքով:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՄԱԴՐԱՍ

2011 թվականի փետրվարի 20-ին հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մաք-դասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Խորեն արդ. Հովհաննիս-յանը Սուրբ Նազարեթ

Մայր եկեղեցու վարչության, ճեմարանի ուսուցիչների եւ մի խումբ աշակերտների հետ Կալկաթայից (Հնդկաստան) ուխտի գնաց Չեն-նայի (Մադրասի) Սուրբ Աստվածածին եկեղեցի, որը հիմնադրվել է 1712 թվա-կանին:

Չեննայի օդանավակայանից ուխտավորներն ուղեւորվեցին եկեղեցի, ուր մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ:

Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն եկեղեցու հարակից «Շմավոնյան» պարտեզում, որտեղ իրենց հավիտենական հանգիստն են գտել Հարություն ավագ քահանա Շմավոնյանը, Շահամիր Շա-համիրյանը...

Մադրասի հայ գաղութը ձեւավորվել է ԺԷ դարում: Այն դարձել է հնդկա-հայ գաղթօջախի հոգեւոր-մշակութային ոստանը:

1794-1796 թվականներին Մադրասում հրատարակվեց առաջին հայ պար-բերականը՝«Ազդարարը», որի խմբագիրն էր Հարություն ավագ քահանա Շմա-վոնյանը: Հոգեւորական, ում անունը ոսկե տառերով պիտի գրվի հայ մամուլի եւ մշակույթի պատմության մեջ: 1772 թվականին Շահամիրյանի տպարանում լույս տեսավ արցախցի Մովսես քահանա Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կո-չի յորդորակ» առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունը: Մեկ տարի անց՝ 1773-ին, նույն տպարանում Մադրասի հայտնի խմբակի ան-դամները՝ Հովսեփ Էմինը, Տեր Մովսեսը, Գրիգոր Խոջաջանյանը, Շահամիրյանները... կյանքի կոչեցին Հայաստանի առաջին սահմանադրությունը՝ «Որո-գայթ փառացը»՝ հայ քաղաքական մտքի ամենամեծ նվաճումը:

Մադրասը մինչեւ հիմա ունի «Armenian Street» փողոցը, որտեղ եւ գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին:

2012 թվականին լրանում է Սուրբ Աստվածածին եկեղեցու 300-ամյակը: Հնդկահայոց հոգեւոր հովվությունը 2012 թվականին պետք է տոնախմբի Սուրբ Աստվա-ծածին եկեղեցու՝ Հայ Մադրասի 300-ամյակը եւ երախտապարտության զգա-ցումով բազմաբնույթ ձեռնարկների միջոցով պիտի խոնարհվի մադրասահայ երեւելիների աստվածահաճո ու ազգաշահ գործի առջեւ:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԻ ՀԵՏ

Փետրվարի 23–ին Վրաստանի ավանդական կրոնական համայնքների առաջնորդները՝ Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու վարչական դեկավար Ջուզեպպե եպիսկոպոս Պազոտոն, Ավետարանական–Մկրտական Եկեղեցու ներկայացուցիչ Իլիա Օսի-

պաշվիլին, Լյութերական Եկեղեցու առաջնորդ Հանս Յոահիմ Կիդերլենը եւ Իսլամ ազգաբնակչության ախունդ Ալի Ալիեւը, Վրաց Ուղղափառ Եկեղեցու պատրիարքարանում հանդիպեցին Համայն Վրաստանի պատրիարք Իլիա Բ հետ:

Հոգեւոր առաջնորդները Վրաց պատրիարքին ներկայացրեցին ավանդական կրոնական համայնքներին իրավաբանական կարգավիճակ տրամադրելու հիմնահարցը՝ հայցելով պատրիարքի միջնորդությունը եւ օժանդակությունը խնդրի լուծման համար:

Պատրիարք Իլիա Բ, լսելով կրոնական առաջնորդների առաջ քաշած հարցը՝ հանձնարարեց պատրիարքարանի իրավաբանին՝ կրոնական առաջնորդների եւ հասարակական կառույցների հետ միասին աշխատել խնդրի առնչությամբ եւ առաջարկություն ներկայացնել պետական համապատասխան մարմիններին:

Հանդիպմանը եղան տարբեր առաջարկություններ, սակայն կրոնական համայնքների ներկայացուցիչները պնդեցին, որ հարկավոր է Վրաստանում գործող ավանդական կրոնական համայնքներին տալ հանրային իրավունքի կարգավիճակ:

Նման հանդիպում վերջերս կայացել էր նաեւ Վրաստանում հավատարմագրված դեսպանների հետ, որի ժամանակ հոգեւոր առաջնորդները դիվանագետների ուշադրությանը ներկայացրեցին տարիներով չարչրկված կարգավիճակի եւ սրբավայրերի վերադարձի հարցերը՝ խնդրելով նրանց աջակցությունը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ի ՀԻՇԱՏԱԿ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԶՈՀԵՐԻ

Փետրվարի 27-ին Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու բակում տեղադրված Նահատակաց խաչաքարի մոտ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ՝ 1988 թվականի փետրվարի 27-29-ը Սումգայիթում ադրբեջանցիների կողմից վայրագորեն սպանված երեսունից ավելի հայերի հիշատակը ոգեկոչելու համար:

Արարողությանը ներկա էին Ռուսաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը, Մոսկվայի հայ դաշնակցական կազմակերպությունը, Ռուսաստանի հայ կանանց միությունը, տարբեր համալսարաններում սովորող ուսանողներ, Սումգայիթ քաղաքի նախկին բնակիչներ:

«Այսօր եկել ենք ցույց տալու մեր հավատարմությունն ու նվիրումն այն արժեքներին, որոնց համար ապրել են մեր նախնիները: Մեծ են եղել մեր ազգի կորուստները: Ապրեցինք եղեռն, եւ շարունակությունը եղավ Սումգայիթը: Այսօր ժամանակն է ոչ թե սգալու, այլ արժանապատիվ ապրելով, որպես ճշմարիտ քրիստոնյաներ, մեր արդար իրավունքի պա-

հանջպտերը լինելու: Այսօր առավել, քան երբեւէ մեզ անհրաժեշտ է համերաշխություն ու միաբանություն: Թող Ասրված զորացնի մեզ սիրո մեջ, որպեսզի կարողանանք լինել միաբան եւ հավերժացնել Սումգայիթի անմեղ զոհերի հիշատակը»,-ասաց սրբազան Հայրը:

Ռուսաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանի խոսքով՝Սումգայիթի դեպքերը չկոտրեցին հայի կամքն ու վճռականությունը, այլ ավելի ամրապնդեցին: Դեսպանի կարծիքով, երբ խաղաղ ճանապարհով լուծվի Արցախի հիմնախնդիրը, կպատժվեն նաեւ Սումգայիթի ոճրագործները:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ